Իսկ Թէոդորոս արար նոցա պատասխանի՝ ծանր իմն է նորասահման խնդիրդ՝ զի յաւուրս ձեր և մեր խորհրդական հաշիւք Աթոռոյն յայտնի քարոզել 'ի բերանս հասարակաց. եթէ իշխանաւորքդ միայն կամիք գիտել և իմանալ, առաքեցէք զարս հաւատարիմս, յորս վստահ են անձինք ձեր, 'ի Ս. Աթոռս, քննել զմայր տումարս և խելամուտ առնել զձեզ. զի մի կարծեսցի թէ պահեալ ըզդանձս իբրեւ մուրացիկ շրջիմք 'ի դրունս ձեր, զի եթէ առ այս եւս ոչ հաճեսջիք՝ տուք ինձ հրաման դալ 'ի Կոստանդինուպոլիս, և տալ զհամար տնտեսութեան իմոյ առաջի մեծի և փոքու. զի մի 'ի պատճառս այս զանց արասջիք զմեօք՝ Թողեալ 'ի ձեռս կեղեքիչ բռնաւորաց, 'ի կործանումն տան և 'ի յափշտակութիւն ազգային սեփհականութեանց։

Եւ 'ի զայրանալ խռովութեանն ընդ Յունաց 'ի Թագաւորեալ քաղաքի, գումարեցան գլխաւորք ազգին առ Յովհաննէս Պատրիարք, և միաբանեալ ընդ միմեանս ուխտեդին, դաշինս և պայմանս հաստատեցին 'ի միջի իւրեանց, զի միակամ և համախորհուրդ յամենայն սրտէ սիրով և ջանիւք աշխատեսցին վասն սեփհական ժառանգութեան ազգին՝ որ յԵրուսաղէմ, և մի երբէք թողցեն զայն 'ի յափշտակութիւն օտարաց. այսքիկ են պայմանքն զորս եդին։ Ի սահմանեալ ժամանակին առանց իւիք պատճառի փութալ եւ հասանել 'ի խորհուրդ և 'ի գործ, բարւոք քննել զխնդիրս եւ միաբան հաճութեամբ որոշել. լինել խորհրդապահ յամենայնի։ Զերկպառակիլ 'ի բանս և 'ի գործս, միաբան մնալ 'ի մահ և 'ի կեանս. միաբան սիրով վաստակաւորաց՝ օրհնութիւն Տեառն. անձնասիրաց, հակառակորդաց և նենդաւորաց՝ անէծս ցաւագինս. գիտութեամբ ամենեցուն մնել 'ի գործ։ Զայս գիր եռուն կնքել նախ Պատրիարքին՝ և ապա ինքեանք մի ըստ միոջէ։ Սակայն ձայն պատերազմին Ռուսաց ընդ Օսմանցիս խոչ եղեւ գործոյն առ ժամն։

Մկրտիչ վարդապետ, Նոյնպէս և վարդապետք Յունաց և Լատինաց դեղերէին 'ի դրունս սակս կարգաւորելոյ ըզկառավարութիւն Երուսաղէմի, որպէս գրեցաք, և չգըտեալ օգնութիւն ինչ յուստեքէ, միջնորդ կալան զդեսպ-